**TEXTE** **ՔԱՄԻՆ ՈՒ ՏԵՐԵՎԸ**

*Աշնանը քամին ուժեղ փչում էր դաշտի մեջ: Դաշտի մեջտեղում կար մի մեծ ծառ, որի ամենաբարձր ճյուղի վրա դեռ ցրտից դողում էր մի խեղճ տերև:*

*- Ինձ հանգիստ թո՛ղ, խնդրում է տերևը քամուն:*

*- Չեմ կարող, պատասխանում է քամին, հիմա աշնան վերջն է, շուտով ձմեռ կլինի, ես պետք է փչեմ, մինչև որ դու ընկնես:*

*- Եթե այդպես է, ասում է տերևը, ես շուտով քեզ կգոհացնեմ, բայց իմացի՛ր, որ գարնանը կրկին կծլեմ նույն ճյուղի վրա, նույն տեղում:*

*Այսպես տերևն ընկնում է ճյուղից և օդի մեջ պարելով, հանգչում է ծառի ոտքին:*

**EXERCICES**

I. Mettez au subjonctif en commençant les phrases par "ուզում եմ, որ ...."

1) Մարդը կարդում է և գրում հայերեն շատ արագ:
2) Արամը և Աշոտը գնում են տուն մեքենայով:
3) Դուք հավաքում եք սունկ անտառի մեջ ամեն աշուն:
4) Մենք տնկում ենք նոր ծառեր ամեն ամառ:
5) Վաղը տարեդարձիս առթիվ դու հագնում ես նոր շապիկդ:
6) Գիքորն աշխատում է խոհանոցում ամեն օր, առավոտից երեկո:
7) Դասերդ ավելի լավ ես սովորում և առանց սխալի ես գրում:

II. Traduisez les phrases suivantes :

1) Elle veut que tu portes ta nouvelle cravate bleue ce soir.
2) Voulez-vous que nous buvions un verre de vin à votre santé ?
3) Quel est votre souhait ? Je souhaite que vous achetiez des cadeaux pour les enfants.
4) Aram ne veut pas que sa soeur danse avec toi ce soir.
5) Je veux que tu apprennes à travailler dans une bibliothèque tout seul.
6) Ce serait bien que les enfants parlent plusieurs langues dans cette école.
7) Nous voulons que vous veniez avec nous demain soir au concert.

III. Mettez à la voix passive :

1) Նրանք խմում են խաղողի հյութ:
2) Նա հիշում է անունս ամեն շաբաթ խաղից հետո:
3) Պարտիզպանները ջրում են բոլոր ծաղիկները ամեն առավոտ:
4) Երեխան կաթ է խմում, երբ շատ ծարավ է:
5) Արագիլը բույն է շինում ամենաբարձր բարդու վրա գարնանը:

IV. Répondez aux questions suivantes en utilisant un subjonctif :

1) Ի՞նչ է ուզում մեր ուսուցիչն այսօր:
2) Ի՞նչ եք ուզում Արամից:
3) Ի՞նչ է ցանկանում պարտիզպանը ձմռանը:
4) Ի՞նչ են ուզում ուսանողներն այս տարի: